Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-1205-08.12.2025-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2013 թվականի դեկտեմբերի 5-ի Հայաստան Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 130-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկը չգերազանցող հանրային իրավական դրամական պահանջով վիճարկման հայցի հիման վրա կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունի ֆիզիկական կամ իրավաբանական անձը: Սույն մասով սահմանված դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունի նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:»:

Հոդված 2. Օրենսգրքի 135-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննությունը դատական նիստում անցկացնելու դեպքում վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումն ուղարկելու հետ միաժամանակ բողոք բերող անձը և դատավարության մասնակիցները տեղեկացվում են գործի դատաքննության ժամանակի ու վայրի մասին:»:

Հոդված 3. Օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին կետով.

«5.1) վարչական մարմնի կողմից վերաքննիչ բողոք է ներկայացվել նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկը չգերազանցող հանրային իրավական դրամական պահանջով վիճարկման հայցի հիման վրա կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ.»:

Հոդված 4. Օրենսգրքի 140-րդ հոդվածում.

1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1. Վերաքննիչ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքները քննում և որոշում է կայացնում բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում: Նշված ժամկետը վերաքննիչ դատարանի պատճառաբանված որոշմամբ կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև վեց ամիս ժամկետով:»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1 մասով.

«1.1. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետը չի տարածվում սույն օրենսգրքով սահմանված վերաքննիչ բողոքների քննության հատուկ ժամկետների վրա:»:

Հոդված 5. Օրենսգրքի 141-րդ հոդվածում.

1) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Վարչական դատարանի դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները քննվում և դրանց վերաբերյալ որոշումները կայացվում են գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ վերաքննիչ դատարանը դատավարության մասնակցի հիմնավորված միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ վերաքննիչ բողոքի քննությունն արդյունավետ իրականացնելու նպատակով այն անհրաժեշտ է իրականացնել դատական նիստում:».

2) լրացնել հետևյալ բովանդակության նոր 4-6-րդ մասերով.

«4. Վերաքննիչ բողոքը դատական նիստում քննելու վերաբերյալ միջնորդությունը դատավարության մասնակիցը կարող է ներկայացնել վերաքննիչ բողոքում կամ վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու ժամկետի ավարտից հետո 1-ամսյա ժամկետում:

5. Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո որոշում է կայացնում վերաքննիչ բողոքը դատական նիստում կամ գրավոր ընթացակարգով քննելու վերաբերյալ:

6. Վերաքննիչ բողոքը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:»:

Հոդված 6. Օրենսգրքի 142-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 142. Վերաքննիչ բողոքի քննությունը դատական նիստում**

1. Վերաքննիչ դատարանում բողոքի քննությունը դատական նիստում իրականացվում է վարչական դատարանում դատաքննության իրականացման կանոններին համապատասխան՝ սույն հոդվածի առանձնահատկությունների հաշվառմամբ:

2. Վերաքննիչ բողոքը դատական նիստում քննելու վերաբերյալ որոշում կայացվելու դեպքում բողոք բերած անձը, ինչպես նաև դատավարության մասնակիցները պատշաճ ծանուցվում են նիստի ժամանակի և վայրի մասին: Նրանց չներկայանալն արգելք չէ գործի դատաքննության համար:

3. Դատաքննությունը վերաքննիչ դատարանում սկսվում է նախագահող դատավորի զեկուցումով: Նախագահող դատավորը շարադրում է բողոքի և բողոքի դեմ ներկայացված պատասխանի ամփոփ բովանդակությունը: Կոլեգիալ կազմի դատավորներն իրավունք ունեն հարցեր տալու նախագահող դատավորին, դատավարության մասնակիցներին, որից հետո գործի դատաքննությունը ավարտվում է, և հայտարարվում են դատական ակտը հրապարակելու վայրն ու ժամանակը:»:

Հոդված 7. Օրենսգրքի 142.1-ին հոդվածում.

1) 1-ին մասն ուժը կորցրած ճանաչել.

2) 3-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Վերաքննիչ դատարանը սույն մասով նախատեսված դատական ակտի հրապարակման օրը կարող է փոփոխել պատճառաբանված որոշմամբ՝ բողոքի քննության համար սահմանված ժամկետների շրջանակներում՝ այդ մասին տեղեկացնելով դատավարության մասնակիցներին:»:

Հոդված 8. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն հոդվածով սահմանված դեպքերի:

2. Սույն օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվանից երեք ամիս հետո, բացառությամբ Ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության և Երևանի քաղաքապետարանի դեմ կայացված՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկը չգերազանցող հանրային իրավական դրամական պահանջով վիճարկման հայցի հիման վրա կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտերի, որոնց մասով օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

3. Սույն օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով սահմանված կարգավորումները տարածվում են նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ներկայացված հայցադիմումների հիման վրա հարուցված գործերի քննության արդյունքում կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտերի վրա:

4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկը չգերազանցող հանրային իրավական դրամական պահանջով վիճարկման հայցի հիման վրա կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ ներկայացված և դեռևս վարույթ չընդունված վերաքննիչ բողոքների ընդունումը ենթակա է մերժման՝ Օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-ին կետով սահմանված հիմքով, իսկ վարույթ ընդունված, բայց դատաքննությունը դեռևս չավարտված վերաքննիչ բողոքներով վերաքննիչ վարույթը ենթակա է կարճման: Դատաքննությունն ավարտված լինելու, իսկ բողոքը գրավոր ընթացակարգով քննելիս՝ դատական ակտի հրապարակման օր նշանակված լինելու դեպքերում

դատաքննությունը վերսկսվում է, և կայացվում է վերաքննիչ վարույթը կարճելու մասին որոշում: Սույն հոդվածով նախատեսված կարգավորումից բացառություն են համարվում սույն օրենքի 1-ին հոդվածով Օրենսգրքի 130-րդ հոդվածում լրացվող 1.1-ին մասով նախատեսված դատական ակտերի դեմ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքները:

5. Սույն օրենքի 4-րդ հոդվածը և 7-րդ հոդվածի 2-րդ մասը ուժի մեջ են մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

6. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ ներկայացված և վարույթ ընդունված վերաքննիչ բողոքների քննությունն իրականացվում է գրավոր ընթացակարգով և դատավարության մասնակիցները սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 1-ամսյա ժամկետում ծանուցվում են բողոքի քննության արդյունքում կայացվելիք դատական ակտի հրապարակման օրվա մասին՝ առանց նշանակված դատական նիստերն անցկացնելու անհրաժեշտության, բացառությամբ եթե վերաքննիչ վարչական դատարանը սույն մասում նշված ծանուցումից հետո 15-օրյա ժամկետում դատավարության մասնակցի հիմնավորված միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ գալիս է եզրահանգման, որ անհրաժեշտ է բողոքի քննությունը շարունակել բանավոր ընթացակարգով:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Արդյունավետ, անկախ և հանրության վստահությունը վայելող դատական համակարգի կայացումը Արդարադատության նախարարության գործունեության առանցքային ուղղություններից են: Ի կատարում նշյալ ուղղության ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2021-2026 թվականների ռազմավարական նպատակներ ամրագրվեցին, ի թիվս այլնի, դատարանների գործունեության արդյունավետության բարձրացումը, վարչական արդարադատության և վարչական վարույթի արդյունավետության բարձրացումը, դատարանների ծանրաբեռնվածության թեթևացումը, ինչպես նաև արդարադատության որակի բարձրացումը:[1]

Վարչադատավարական ոլորտի բարեփոխումների իրականացումը՝ մի կողմից ուղղակի ազդեցություն ու նշանակություն է ունենում արդար դատաքննության իրավունքի պատշաճ երաշխավորման վրա, մյուս կողմից՝ ուղղված է դատական և իրավական բարեփոխումների ռազմավարական նպատակների իրականացմանը: Այլ խոսքով՝ վարչադատավարական շարունակական և հետևողական բարեփոխումներն ուղղված են դատարանների ծանրաբեռնվածության թեթևացման միջոցով երաշխավորելու գործերի արդարացի, ողջամիտ ժամկետներում քննության իրավունքը, իրենց էական ազդեցությունն ունենալով նաև արդարադատության արդյունավետության և որակի վրա:

Հասարակական հարաբերությունների, դրանով պայմանավորված՝ նյութական իրավունքի զարգացման, իրավակիրառ գործունեության ընթացքում վեր հանվող խնդրահարույց իրավիճակների և բացերի, ինչպես նաև շարունակական ի հայտ եկող այլ կարիքների բացահայտման արդյունքում վարչական դատավարության որոշ ինստիտուտներ դեռևս կարիք ունեն շարունակական վերանայման և բարելավման, իսկ պրակտիկայում ի հայտ եկած տարբեր խնդիրները՝ լուծման: Իրականացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերանայման անհրաժեշտություն է առկա վարչական դատավարությունում

1. վերաքննության առանձնահատկությունների առնչությամբ,
2. որոշակի բնույթի գործերով կոնկրետ սուբյեկտի կողմից վերաքննիչ բողոք ներկայացնելու իրավունքի սահմանափակման առնչությամբ:

[1] Տե՛ս ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի թիվ 1133-Լ որոշմամբ հաստատված Հավելված 1՝ ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2021-2026 թվականների ռազմավարություն, էջեր 3-8:

Անդրադառնալով Նախագծով առաջարկվող վերաքննության ինստիտուտի փոփոխություններին.

ՀՀ Վարչական և Վերաքննիչ վարչական դատարաններում գործերի քննության վիճակագրությունը ցույց է տալիս, որ զգալի թիվ են կազմում Վարչական դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքները: Մասնավորապես, ՀՀ վարչական դատարանում գործերի քննության 2024 թվականի հաշվետվությամբ՝ Վարչական դատարանում հաշվետու ժամանակահատվածում ավարտված գործերի ընդհանուր թիվը կազմում է 15695 գործ, իսկ՝ Վարչական դատարանի բողոքարկված դատական ակտերի ընդհանուր թիվը կազմել է մոտ 7323 բողոք, որոնցից բողոքարկված գործն ըստ էության լուծող դատական ակտերի քանակը կազմում է 6597 գործ:[2] Ընդ որում, հարկ է նկատել, որ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 2024 թվականի հաշվետվությամբ՝ հաշվետու ժամանակահատվածում ստացված բողոքների ընդհանուր թիվը կազմում է 8748 բողոք:

Ստացվում է, որ Վարչական դատարանի կողմից կայացված ակտերի զգալի մասը բողոքարկվում է Վերաքննիչ վարչական դատարանում, ինչը ցույց է տալիս վերաքննիչ ատյանի դատավարական գործառույթների ընդգծման ու այդ գործառույթներն իրենց նպատակին ծառայեցնելու անհրաժեշտությունը:

Այսպես, վերաքննիչ դատարանում դատական վերանայման առարկան սահմանափակվում է միայն վարչական դատարանի դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգմամբ: Նշյալը բխում է դատարանների միջև գործառութային կապն ապահովելու տրամաբանական պահանջից: Մասնավորապես, դատարանակազմական խնդիրներով պայմանավորված՝ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները իրականացնում են տարբեր դատավարական գործառույթներ և համապատասխանաբար օժտված են դրանց կատարումն ապահովող տարբեր լիազորություններով: Նման պայմաններում, պետության խնդիրն է օրենսդրությամբ ապահովել արդարադատության իրականացումն ընթացակարգային այնպիսի կանոններով, որոնցով հնարավոր կլինի երաշխավորել և՛

[2] Տե՛ս ՀՀ վարչական դատարանում վարչական գործերի քննության 2024 թվականի հաշվետվություն և Վերաքննիչ վարչական դատարանի 2024 թվականի գործունեության վերաբերյալ հաշվետվություն: Հղումը՝ https://court.am/hy/statistic-inner/248:

արդար դատաքննության իրավունքը, և՛ դատավարական ձևերի բազմազանության կիրառմամբ հասնել արդյունավետ և որակյալ արդարադատության իրականացմանը:

Վերոնշյալի լույսի ներքո՝ վերաքննիչ բողոքների մեծաքանակության պայմաններում հաճախ վերաքննիչ ատյանի խնդիրն է դառնում յուրաքանչյուր գործով ըստ էության լուծում իրականացնելը: Արդյունքում, անհրաժեշտ է դատավարական գործառույթների ապահովմամբ դատարանի ծանրաբեռնվածությունը թեթևացնել, երաշխավորել վերաքննիչ բողոքների քննության ողջամիտ ժամկետների իրականացման իրավական հնարավորություն՝ դատավարական պրոցեսների անընդհատություն փոխակերպելով արագ և արդյունավետ արդարադատության:

Միևնույն ժամանակ, անդրադառնալով քաղաքացիական դատավարության ընթացքում դատական ակտերի վճռաբեկության կարգով բողոքարկման կարգին՝ անհրաժեշտ է նշել, որ օրենսդիրը նախատեսել է Վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ վճռաբեկության կարգով բողոքների կոլեգիալ քննություն, ինչը ստեղծում է արդյունավետության և օբյեկտիվության լրացուցիչ երաշխիք:

Սակայն, այս համատեքստում հարկ է նկատել, որ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանվում է, որ Վճռաբեկ դատարանում վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու, վճռաբեկ բողոքը վերադարձնելու, վճռաբեկ բողոքի ընդունումը մերժելու, վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու հարցը լուծվում է նիստին ներկա դատավորների ձայների ընդհանուր թվի մեծամասնությամբ, իսկ վճռաբեկ բողոքը քննվում է Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի, իսկ հակակոռուպցիոն պալատում՝ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության դատական կազմի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ: Ընդ որում, վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե վճռաբեկ բողոքը չի համապատասխանում օրենսգրքի 393-րդ հոդվածի պահանջներին, վճռաբեկ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բացակայում է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը, կամ դատարանը մերժել է պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու վերաբերյալ միջնորդությունը: Նշյալ կարգավորման բովանդակային վերլուծության արդյունքում անհրաժեշտ է իրավացիորեն նշել, որ վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմք հանդիսացող թերությունները կարող են լինել այնպիսի խախտումներ, որոնց

վերացման դեպքում բողոքը կրկին կարող է ներկայացվել նույն դատարան: Այսինքն՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելիս օրենսդրական հիմքերն իրենց բովանդակության այնպիսինն են, որոնց պայմաններում խոսքը գնում է օրինակ՝ վճռաբեկ բողոքի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջների համապատասխանությունն ապահովելու, դատավարական ժամկետների պահապանման, իսկ չպահպանելու դեպքում՝ բաց թողնված դատավարական ժամկետների վերականգման միջնորդություն ներկայացնելու անհրաժեշտության կամ պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու միջնորդությունը մերժելու դեպքում պետական տուրքի վճարման և անդորրագիրը Վճռաբեկ դատարան ներկայացնելու անհրաժեշտության մասին: Նման պայմաններում, վճռաբեկ բողոքի վերադարձնելու հարցը կոլեգիալ կազմով լուծելու իրավական անհրաժեշտությունը բացակայում է: Այլ կերպ ասած, օրինակ՝ վճռաբեկ բողոքի էլեկտրոնային կրիչը բողոքին կցված չլինելը կամ վճռաբեկ բողոքում բողոքին կցվող փաստաթղթերի ցանկը նշած չլինելը բողոքի ֆորմալությանը ներկայացվող պահանջներ են, որոնց առկայության հիմքով վճռաբեկ բողոքի համար լրացուցիչ արդյունավետության և օբյեկտիվության անհրաժեշտությունն ուղղակիորեն բացակայում է: Ավելին՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմքերը հիմնականում իրենց բնույթով այնպիսի թերություններ են, որոնք կարող են արձանագրվել նաև մեկ դատավորի կողմից:

Միևնույն ժամանակ, հարկ է նկատել, որ վճռաբեկ բողոքը վերադարձվում է նաև այն դեպքերում, երբ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշման՝ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար էական նշանակություն ունենալու հանգամանքը կամ մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտման առկայությունը չի հիմնավորվում բողոք բերող անձի կողմից: Նման դեպքերում վճռաբեկ բողոքը վերադարձնելու ինստիտուտի իրավական նշանակություն անձին հնարավորություն տալն է շտկելու վճռաբեկ բողոքում առկա թերությունները և կրկին ներկայացնելու այն: Ստացվում է, որ նման հիմքով վճռաբեկ բողոքը թերություններն ուղղելուց հետո այն վճռաբեկ դատարան կողմից կընդունվի վարույթ՝ կոլեգիալ կազմով, իսկ այն դեպքերում, երբ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը չհիմնավորելու հիմքով վերադարձվի և նույն բովանդակության կրկին ներկայացվի դատարան, ապա

վճռաբեկ դատարանը՝ պալատի կոլեգիալ կազմով որոշում կկայացնի վճռաբեկ բողոքը առանց քննության թողնելու մասին: Նման պայմաններում անհրաժեշտ է հատուկ ընդգծել, որ վճռաբեկ բողոքը վերադարձնելու որոշումը պալատի մեկ դատավորի կազմով իրականացնելու հարցը լուծելիս վճռաբեկ դատարանում գործի քննության կոլեգիալությունը արդյունավետության և օբյեկտիվության լրացուցիչ երաշխիք լինելու խնդիր չունի, քանի որ Քաղաքացիական դատավարության օրենսգրքով երաշխավորվում է վճռաբեկ բողոքի ընդունումը մերժելու կամ այն առանց քննության թողնելու որոշում կայացնելիս պալատի կոլեգիալության կարգով գործելու սկզբունքը:

Ընդ որում, հարկ է նկատել նաև, որ խոսքը միայն վճռաբեկ բողոքը վերադարձնելու ինստիտուտի մասին է, որից հետո վարույթ ընդունված վճռաբեկ բողոքների քննությունը արդեն իրականացվելու է ընդհանուր կարգով:

Վիճակագրական տվյալներ

Դատական վիճակագրությունը վարվում է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1542-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան (ըստ դատարանների և ըստ դատավորների) կիսամյակային և տարեկան պարբերականությամբ:

2024 թվականին ավարտված դատական գործերի վերաբերյալ տեղեկատվությունը հանգում է հետևյալին.

Այսպես, ի կատարումն «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի և ԲԴԽ-25-Ն–10 որոշմամբ սահմանված պահանջների, ՀՀ դատարանների նախագահների կողմից գործերի քննության ողջամիտ ժամկետների մշտադիտարկման 2024 թվականի 1-ին կիսամյակի և տարեկան արդյունքների վերաբերյալ կազմված զեկույցների համաձայն՝ դատական գործերի քննության ողջամիտ ժամկետների և Բարձրագույն դատական խորհրդի կողմից ԲԴԽ-65-Ո–165 որոշմամբ սահմանված դատական գործերի քննության միջին ուղենիշային ժամկետների խախտումներ չեն հայտնաբերվել:

Վերաքննիչ վարչական դատարանը՝ 15 դատավորի կազմով 2024 թվականի ընթացքում ըստ էության լուծող դատական ակտերով ավարտված գործերի քանակը կազմել է 5270 գործ: Ընդ որում, միջինացված թիվը յուրաքանչյուր դատավորի հաշվով կազմել է 350-400 և ավել գործ:

Անդրադառնալով Նախագծով առաջարկվող որոշակի բնույթի գործերով կոնկրետ սուբյեկտի կողմից վերաքննիչ բողոք ներկայացնելու իրավունքի սահմանափակման վերաբերյալ փոփոխություններին.

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:»:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:»:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Դատական օրենսգիրք) 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Առաջին ատյանի դատարանի՝ օրինական ուժի մեջ չմտած դատական ակտի վերաքննության կարգով վերանայման իրավունքն ապահովվում է օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. Վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի, ինչպես նաև սույն օրենսգրքի 131-րդ հոդվածով նախատեսված միջանկյալ դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն՝

1) դատավարության մասնակիցները.

2) դատավարության մասնակից չդարձված անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ:»:

Հայաստանի Հանրապետությունում գործում է եռաստիճան դատական համակարգ, որի շրջանակներում իրականացվում է ներկայացված հայցերի և

կայացված դատական ակտերի դեմ ներկայացված վերաքննիչ և վճռաբեկ բողոքների քննություն: Թեև Դատական օրենսգրքով նախատեսվում է դատական ակտերի վերանայման իրավունքը, այնուամենայնիվ այն չի դիտվում որպես բացարձակ, սահմանափակման ոչ ենթակա իրավունք, այլ որպես իրավունք, որն իրացվում է օրենքներով սահմանված դեպքերում և կարգով՝ հնարավորություն տալով օրենսդրին առանձին դատավարությունների խնդիրներով և բնույթով պայմանավորված նախատեսել բողոքարկման իրավունքի հատուկ կարգավորումներ: Այլ կերպ ասած՝ դատական ակտերի վերանայման իրավունքն առկա է, սակայն օրենսդիրը կարող է սահմանել այդ իրավունքի իրացման պայմաններ՝ դրական կամ բացասական նախադրյալներ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանվում է դատական եռաստիճան համակարգի կողմից վարչական գործերով կայացված գործն ըստ էության լուծող բոլոր դատական ակտերի բողոքարկման հնարավորություն: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ վերաքննիչ դատարանում վարույթի քննության կարգը սահմանող 22-րդ գլխի ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել, որ օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի գործն ըստ էության լուծող բոլոր դատական ակտերը վերաքննիչ ատյանում բողոքարկելու հնարավորություն՝ անկախ վեճի բնույթից, հանրային իրավական դրամական պահանջի չափից, գործի բարդությունից և այլն: Միաժամանակ, օրենսդիրը նախատեսել է վերաքննիչ բողոք ներկայացնելու դրական և բացասական նախադրյալներ, որոնք այն պայմաններն են, որոնց առկայության կամ բացակայության հետ օրենսդիրը կապում է բողոք ներկայացնելու հնարավորությունը: Այս պայմաններն ինքնանպատակ չեն և դրանցից յուրաքանչյուրը, հետապնդելով դատավարության ընթացքում կոնկրետ խնդրի լուծման նպատակ, կարող է ունենալ ֆորմալ կամ ոչ ֆորմալ/բովանդակային բնույթ: Այնուամենայնիվ, վարչական դատավարության օրենսգիրքը չի սահմանում բողոքարկման որևէ նախապայման՝ կախված գործն ըստ էության լուծող դատական ակտի տեսակից: Ի տարբերություն վարչական դատավարության՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը նախատեսում է վերաքննիչ բողոք ներկայացնելու սահմանափակում՝ կախված վեճի առարկայի արժեքի չափից: Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության

օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ «1. Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվում է, եթե՝ (...) վերաքննիչ բողոքը բերվել է գույքային պահանջով քաղաքացիական գործով, եթե տվյալ գործով վեճի առարկայի արժեքը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկը, բացառությամբ այն դեպքերի, երբ բողոք բերող անձն իր վերաքննիչ բողոքում հիմնավորում է, որ առաջին ատյանի դատարանը թույլ է տվել արդար դատաքննության իրավունքի բուն էությունը խաթարող դատական սխալ.»:

Սահմանադրական դատարանը 18.07.2012 թվականի թիվ ՍԴՈ-1037 որոշմամբ ընդգծել է, որ դատական ակտի բողոքարկման կամ վերաքննության իրավունքը թեև վերաքննիչ և վճռաբեկ ատյանի դատարաններ ստեղծված լինելու պարագայում հանդիսանում է դատարանի մատչելիության և դատական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքների բաղադրատարր, այնուամենայնիվ, նշված իրավունքները բացարձակ չեն և ենթակա են որոշակի սահմանափակման, որոնցից մեկն էլ հանդիսանում է օրենսգրքի վիճարկվող նորմով նախատեսված որոշակի կատեգորիայի քաղաքացիական գործերով վերաքննության սահմանափակման դեպքը: Այս առումով սահմանադրական դատարանն ինքնին իրավաչափ է համարում հայցագնի չափով պայմանավորված՝ քաղաքացիական գործերով վերաքննության իրավունքի սահմանափակումը: Այլ խնդիր է օրենսգրքի վիճարկվող նորմում ամրագրված գումարի չափի արդարացված լինելը, ինչպես նաև նման սահմանափակման՝ որպես ընդհանուր կանոնից բացառության նախատեսման, համապատասխանությունն արդարադատության ընդհանուր սկզբունքներին:[3]

Վերաքննիչ վարչական դատարանի գործունեության 2024 թվականի հաշվետվության համաձայն՝ հաշվետու տարվա ընթացքում ներկայացվել է **8748 բողոք**:[4] Կատարված հարցմանն ի պատասխան՝ Դատական դեպարտամենտից ստացվել է տեղեկատվություն առ այն, որ 2024 թվականի ընթացքում դրամական պարտավորություն առաջացնող վարչական ակտերի վերաբերյալ կայացված դատական ակտերի դեմ ներկայացվել է ընդհանուր **2.877** վերաքննիչ բողոք, որից

[3]Տե՛ս Սահմանադրական դատարանի 2012 թվականի հուլիսի 18-ի թիվ ՍԴՈ-1037 որոշումը: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.arlis.am/hy/acts/77244:
[4] https://court.am/hy/statistic-inner/248

2.367-ը վարչական մարմինների կողմից: Ընդ որում, վարչական մարմինների կողմից ներկայացված 2.367 բողոքից **1974-ը** ներկայացվել է **մինչև 300.000 դրամով հանրային իրավական դրամական պահանջներով:**

Ստացվում է, որ վերաքննիչ վարչական դատարանում 2024 թվականին՝

- ***բողոքների 32%-ը ներկայացվել է դրամական պարտավորություն առաջացնող վարչական ակտերի վերաբերյալ կայացված դատական ակտերի դեմ,***
- ***դրանց 82%-ը ներկայացվել է վարչական մարմինների կողմից,***
- ***դրանց 83%-ը ներկայացվել է մինչև 300.000 դրամով հանրային իրավական դրամական պահանջներով (դրանց 65%-ը ներկայացվել է ՀՀ ՆԳՆ Ոստիկանության պարեկային ծառայության կողմից 25.000 դրամ հանրային իրավական դրամական պահանջներով կայացված դատական ակտերով):***

Ընդ որում, 1974 գործից 1705-ը ներկայացվել է մինչև 200.000 դրամով հանրային իրավական դրամական պահանջներով, որոնցից 1292-ը ներկայացվել է ՀՀ ՆԳՆ Ոստիկանության պարեկային ծառայության կողմից 25.000 դրամ հանրային իրավական դրամական պահանջներով կայացված դատական ակտերով: Ընդ որում, հատկանշական է, որ ըստ Բարձրագույն դատական խորհրդից ստացված տեղեկատվության՝ 1705 բողոքներից 985-ը մերժվել են, 77-ը՝ բավարարվել, 543-ը դեռ չեն լուծվել: Այսինքն՝ քննված բողոքների 84%-ը մերժվել է:

Այսպիսով, վերաքննիչ վարչական դատարանի ծանրաբեռնվածության ավելացմանն էականորեն նպաստում են համեմատաբար փոքր արժեք ունեցող գործերով բողոքարկումները, որոնց 80 տոկոսից ավելին բողոքարկվում են ոչ թե ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, այլ վարչական մարմինների կողմից: Մինչդեռ, հաշվի առնելով վարչական դատարանում ամբողջ ծավալով գործի քննություն իրականացվելը և վերադաս դատական ատյանների՝ առավելապես ստորադաս դատարանների կայացրած դատական ակտերի ստուգում իրականացնելու գործառույթը՝ վերադաս դատարանները հնարավորինս չպետք է ծանրաբեռնվեն ոչ մեծ արժեք ունեցող գործերով:

Այս համատեքստում անդրադառնալով միջազգային կառույցների դիրքորոշումներին և օտարերկրյա պետությունների փորձին՝ հարկ ենք համարում ընդգծել՝

Արդարադատության մատչելիության ուղիների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 1981թ. մայիսի 14-ի թիվ R (81) 7 հանձնարարականի 15-րդ կետի համաձայն՝ ոչ խոշոր չափի հայցային պահանջներով վեճերի համար պետք է նախատեսվի հատուկ ընթացակարգ, որը հնարավորություն կտա կողմերին դիմել դատարան՝ չկրելով վեճի առարկա հանդիսացող գումարի համեմատ անհամաչափ ծախսեր: Այս նպատակներով հնարավոր է նախատեսել հեշտացված (պարզեցված) դատական վարույթ, զերծ մնալ անհարկի դատական լսումներից և սահմանափակել բողոքարկման իրավունքը:

Դատական համակարգի կատարելագործմանն ուղղված քաղաքացիական դատավարության սկզբունքների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 1984 թ. փետրվարի 28-ի թիվ R (84) 5 հանձնարարականի 8-րդ սկզբունքի 1-ին մասի b) կետի համաձայն՝ պետք է նախատեսվեն որոշակի կանոններ կամ կանոնների ամբողջություն՝ ուղղված վեճի լուծման արագացմանը՝ անվիճելի իրավունքի, նախապես գնահատված վնասի, ինչպես նաև ոչ մեծ գումարներով հայցերի հետ կապված դեպքերում:

Դատարանների աշխատանքի չափազանց ծանրաբեռնվածության անթույլատրելիության և սահմանափակման միջոցառումների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 1986թ. սեպտեմբերի 16-ի թիվ R (86) 12 հանձնարարականի 3-րդ կետում անդամ պետություններին խորհուրդ է տրվում դատական ատյանների ծանրաբեռնվածությունը թոթափելու համար ստեղծել արտադատական այնպիսի մարմիններ, որոնց կողմերը կարող են դիմել ոչ մեծ գումարի հայցապահանջներով, ինչպես նաև իրավունքի կոնկրետ ոլորտների խնդիրներով վեճերի լուծման համար:

1995թ. փետրվարի 7-ին Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի ընդունած՝ «Քաղաքացիական և առևտրային գործերով բողոքարկման ընթացակարգերի և համակարգերի գործողության մեջ դնելու և գործունեության բարելավման վերաբերյալ» թիվ R(95)5 հանձնարարականի՝ «Վերաքննության իրավունքից բացառություն կազմող հարցեր» վերտառությամբ 3-րդ հոդվածի a) կետում նախատեսվում է՝ «Երկրորդ ատյանի դատարանի կողմից միայն պատշաճ հարցերի քննությունն ապահովելու նպատակով պետությունները պետք է քննարկեն ստորև

թվարկված բոլոր կամ որոշ միջոցառումների ընդունման հնարավորությունը … բացառել մի շարք գործեր, օրինակ՝ ոչ մեծ գումարի հայցապահանջները:»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) դատական պրակտիկայի ամփոփումը թույլ է տալիս փաստել, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) պետությունների համար չի սահմանում պարտադիր բողոքարկման ատյան ունենալու պահանջ, սակայն բողոքարկման համակարգ նախատեսելու դեպքում այն պետք է համապատասխանի արդար դատաքննության պահանջներին: Շատ գործերով Եվրոպական դատարանն անդրադարձել է դատական բողոքարկման համար նախատեսված որոշակի սահմանափակումներին: Այսպես, Եվրոպական դատարանն ընդգծել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը չի պարտադրում պետություններին ստեղծելու վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, սակայն եթե այդպիսի դատարանները գոյություն ունեն, ապա 6-րդ հոդվածով ամրագրված երաշխիքները պետք է պահպանվեն:[5] Եվրոպական դատարանն ընդգծել է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառելիությունը վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանների նկատմամբ կախված է տվյալ վարույթների հատուկ բնույթից: Դատարանը նշել է, որ գումարի շեմի (ratione valoris) կիրառումը որպես գերագույն դատարան բողոք ներկայացնելու նախապայման, օրինական և ողջամիտ դատավարական պահանջ է՝ հաշվի առնելով գերագույն դատարանի էությունը, այն է՝ քննության առնել միայն իրավական առումով նշանակալի գործեր:[6] Երբ հարց է ծագել՝ արդյո՞ք վերաքննիչ կամ վճռաբեկ ատյանների վարույթները համապատասխանել են 6-րդ հոդվածի պահանջներին, Եվրոպական դատարանը նշել է, որ պետք է հաշվի առնել, թե ինչ ծավալով է գործը քննվել ստորին ատյաններում, արդյո՞ք առկա են արդար դատաքննության հետ կապված խնդիրներ ստորին ատյաններում, ինչպես նաև վերադաս դատարանի բնույթը կամ դերը դատավարության մեջ:[7] Բացի այդ, ratione valoris սկզբունքի համատեքստում դատարանը հաշվի է առնում նաև այլ

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Անդրեևան ընդդեմ Լատվիայի, թիվ 55707/00 որոշումը, § 97:

[6] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Dobrić-ն ընդդեմ Սերբիայի, թիվ 2611/07 և 15276/07 որոշումները, § 54:

[7] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Brualla Gómez de la Torre-ն ընդդեմ Իսպանիայի, թիվ 155/1996/774/975 որոշումը, §§ 37-39:

հանգամանքներ, մասնավորապես՝ արդյո՞ք սահմանափակումը կանխատեսելի է, արդյո՞ք պետությունը, թե դիմողն է կրելու դատավարության ընթացքում թույլ տրված դատական սխալների բացասական հետևանքները և արդյո՞ք սահմանափակումը չափազանց ձևական է:[8]

Միաժամանակ, օրինակ **Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում** գործում է վերաքննիչ բողոք ներկայացնելու թույլտվության համակարգը: Մասնավորապես, «Վարչական դատարանի մասին» ակտի 124-րդ հոդվածի համաձայն՝ կողմերն իրավունք ունեն վերջնական և միջանկյալ դատական ակտերը բողոքարկել, եթե բողոքն ընդունվել է վարչական դատարանի կողմից: Ընդ որում, բողոքը թույլատրվում է, եթե՝ 1. լուրջ կասկածներ կան վճռի իրավաչափության մեջ, 2. եթե գործը ներկայացնում է առանձնահատուկ փաստական կամ իրավական բարդություն, 3. եթե իրավական հարցը ֆունդամենտալ նշանակություն ունի, 4. եթե որոշումը շեղվում է վերադաս դատարանի դիրքորոշումներից, 5. եթե առկա է ընթացակարգային այնպիսի խախտում, որը ենթակա է գնահատման վերաքննիչ դատարանի կողմից:[9]

Օրինակ, **Ռումինիայում** դատարանների իրավասությունը սահմանվում է ըստ վիճարկվող ակտը կայացրած մարմնի, իսկ հարկային վեճերի դեպքում՝ ըստ հարկի չափի: Այսպիսով, առաջին ատյանի դատարանը կարող է քննարկել տեղական մարմինների կողմից կայացված ակտերի դեմ բերված հայցերը և հարկերի, տուրքերի, մաքսատուրքերի հետ կապված վարչական ակտերը, եթե ակտով սահմանված պարտավորության չափը գերազանցում է 220.000 եվրոն:[10]

Այսպիսով, ինչպես ներպետական, այնպես էլ օտարերկրյա պրակտիկայի ամփոփումը թույլ է տալիս փաստել, որ վերադաս դատական ատյաններում բողոքարկման նախապայմանների սահմանումը, այդ թվում՝ գումարային շեմ նախատեսելու միջոցով, հանդիսանում է բողոքարկման իրավունքի սահմանափակման օրինական դատավարական միջոց, եթե այն բավարարում է կանխատեսելիության, համաչափության, ողջամտության պահանջներին:

---

[8] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարան Garzičić-ն ընդդեմ Չեռնոգորիայի, թիվ 17931/07 որոշումը, §§ 30-32:

[9] Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.gesetze-im-internet.de/vwgo/__124.html:

[10] Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.aca-europe.eu/en/eurtour/i/countries/romania/romania_en.pdf:

Բողոքարկման իրավունքը, չհանդիսանալով սահմանափակման ոչ ենթակա իրավունք, որոշ պայմանների հաշվառմամբ կարող է ենթարկվել իրավաչափ նպատակ հետապնդող սահմանափակումների: Ընդ որում, սահմանափակումները կարող են պայմանավորված լինել հայցագնի/հայցի առարկայի արժեքի փոքրարժեքության հետ: Այս եղանակով օրենսդիրը բացառում է նվազ կարևորություն ունեցող գործերի՝ վերաքննիչ դատարանում բողոքարկումների հնարավորությունը՝ կարևորելով մնացյալ գործերի արդյունավետ քննության իրականացման համար Վերաքննիչ դատարանի ծանրաբեռնվածության թեթևացման անհրաժեշտությունը. նման եզրահանգման համար հիմք է ծառայել նաև ԲԴԽ-ից ստացված տեղեկատվությունը ներկայացված բողոքների մեծամասնության մերժված լինելու վերաբերյալ:

Ընդ որում, այս համատեքստում էական է ընդգծել, որ պետությունն ինքն է հրաժարվում բողոքարկման իրավունքից՝ հաշվի առնելով բողոքարկման իրավունքից հրաժարման արդյունքում մի շարք ռեսուրսների խնայողությունը: Այսպես՝ բողոքարկման իրավունքից հրաժարումը հնարավորություն է տալիս՝

- ապահովել վերաքննիչ վարչական դատարանի ծանրաբեռնվածության թեթևացում՝ հնարավորություն տալով ինչպես դատավորներին, այնպես էլ վերջիններիս աշխատակազմերին առավել մեծ ռեսուրս ներդնել ավելի բարդ գործերի լուծման հարցում,
- չիրականացնել ծանուցումներ փոքր արժեք ունեցող գործերով՝ դրանով իսկ խնայելով փոստային և այլ ծախսեր, որոնք կատարվում են դատարանների որոշումների և դատավարական փաստաթղթերի՝ կողմերին ուղարկելու հետևանքով,
- նվազեցնել ոչ արդյունավետ բողոքարկումների քանակը (ըստ ԲԴԽ վիճակագրության՝ քննված բողոքների 84%-ը մերժվել է):

2. Առաջարկվող կարգավորման բնույթը.

«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով (այսուհետ նաև՝ Նախագիծ) առաջարկվում է Վարչական դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննիչ բողոքների քննությունն իրականացնել գրավոր

ընթացակարգով: Ամրագրելով վերաքննիչ բողոքների քննությունը գրավոր ընթացակարգով իրականացնելու ընդհանուր օրենսդրական կանխավարկած՝ միաժամանակ, սահմանվում են որոշ բացառություններ: Մասնավորապես, Նախագծով սահմանվում է, որ եթե կողմի միջնորդությամբ մինչև վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու վերջնաժամկետի ավարտից հետո 1-ամսյա ժամկետում, իսկ դատարանի սեփական նախաձեռնությամբ բողոքի քննության ցանկացած փուլում՝ դատարանը գա եզրահանգման, որ վերաքննիչ բողոքի քննության արդյունավետության նպատակով այն անհրաժեշտ է իրականացնել դատական նիստում, ապա որոշում է կայացնում վերաքննիչ բողոքի քննությունը դատական նիստում անցկացնելու մասին, ծանուցելով այդ մասին դատավարության մասնակիցներին:

Բողոքի քննությունն արդյունավետ իրականացնելը ենթադրելու է դատարանի գնահատմամբ դատավարական այն գործողությունների համախումբը, որն անհրաժեշտ կլինի կոնկրետ բողոքով քննության ընթացքում դատարանի կողմից գնահատման ենթակա փաստերի և դրանց վերաբերյալ դատարանի վերջնական եզրահանգումների համար: Միաժամանակ, վերաքննիչ բողոքի քննությունը բանավոր ընթացակարգով իրականացնելու միջնորդություն ներկայացնելու ժամկետի առնչությամբ, հարկ է նշել, որ Նախագծով օգտագործվող ձևակերպումը, հնարավորություն կտա նման միջնորդությունը ներառել ինչպես վերաքննիչ բողոքում, այնպես էլ՝ վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու ժամկետի ավատից հետո մինչև 1-ամսյա ժամկետում, ներառելով այն կամ վերաքննիչ բողոքի պատասխանում կամ առանձին դատավարական փաստաթղթի ձևով:

Այս առումով, հարկ ենք համարում հատուկ անդրադառնալ վերաքննիչ բողոքի քննությունը բանավոր՝ դատական նիստում քննելու միջնորդության ներկայացնելու ժամկետի սահմանման նպատակահարմարությանն ու դրա հիմնական կիրառական նշանակությանը: Մասնավորապես, վերաքննիչ բողոքի քննությունը դատական նիստում անցկացնելու վերաբերյալ միջնորդության դատավարական հստակ ժամկետում ներկայացնելու օրենսդրական նման կարգավորումը առաջարկելը պայմանավորված է մի կողմից նման անհրաժեշտությունը բողոքի քննության հնարավոր շուտ փուլում բացահայտելու անհրաժեշտությամբ, մյուս կողմից՝

իրավունքի հնարավոր չարաշահումները բացառելու կարևորությամբ: Այսպես, եթե վերաքննիչ բողոքը դատական նիստում քննելու միջնորդություն ներկայացնելու հստակ ժամկետներ չսահմանվեն, ապա հնարավոր է Նախագծով առաջարկվող վերաքննիչ բողոքների գրավոր քննության և արդեն իսկ սահմանված դատական ակտի կայացման օրվան նախորդող օրը ներկայացնել նման միջնորդություն, արդյունքում դատարանը ստիպված կլինի ոչ միայն նման միջնորդության քննության արդյունքում որոշում կայացնել, այլ նաև օրինակ գուցե անհրաժեշտություն լինի վերաքննիչ բողոքի քննության ժամկետի երկարաձգման որոշում կայացնել: Արդյունքում, կստացվի, որ յուրաքանչյուր նման դեպքում դատարանի համար առաջարկվող կարգավորումները կառաջացնեն լրացուցիչ ծանրաբեռնվածություն և չեն արդարացնի Նախագծով հետապնդվող նպատակը: Ուստի, դատավարական կոնկրետ ժամկետների սահմանումը հետապնդում է հստակ նպատակ, որը մի կողմից երաշխավորելու է իրավունքի չարաշահման բացառման դեպքերը, մյուս կողմից միջոց է հասնելու Նախագծով առաջադրված նպատակներին:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ունի ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Ընդ որում, այդ իրավունքի իրացման նվազագույն և կարևոր երաշխիքներն են **հրապարակային դատաքննությունը** (մասնավորապես՝ գործը քննող դատարանի, քննության առարկա գործի, քննության վայրի, ժամանակի, դատաքննության կարգի և այլնի մասին հրապարակային տեղեկությունները), ինչպես նաև **դատական ակտի պարտադիր հրապարակումը**:

Այս համատեքստում, ելնելով քննվող գործերի առանձնահատկություններից և դրանց արդար, արագ ու արդյունավետ լուծման անհրաժեշտությունից դատավարական օրենսդրությամբ առկա են գործերի դատաքննության ընթացակարգային այնպիսի ձևեր, ինչպիսիք են դատաքննության **բանավոր և գրավոր ընթացակարգերը** կամ բանավորության և գրավոր քննության սկզբունքները: Գրավոր ընթացակարգի պայմաններում գործի քննությունն իրականացվում է առանց դատական նիստերի հրավիրելու և առանց «բանավոր լսումների»՝ այսինքն՝ առանց

կողմերի ուղղակի մասնակցության, որը պայմանավորված է դատավարական մի շարք առանձնահատկություններով:

Գրավոր ընթացակարգով դատաքննության միջազգային իրավական (եվրոպական) պրակտիկայի և այդ բնագավառում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի բովանդակությունն ու առանձնահատկությունները վկայում են, որ դատաքննության բանավորության և գրավոր քննության սկզբունքները հավասարապես կիրառելի են արդարադատության բոլոր բնագավառներում (ընդհանուր իրավասության (քրեական և քաղաքացիական գործերով), վարչական, սահմանադրական և մասնագիտացված այլ արդարադատության):

Վարչական դատավարությունում դատաքննության գրավոր ընթացակարգի ինստիտուտը ՀՀ իրավահամակարգում ներդրված է սահմանադրական, ինչպես նաև վարչական արդարադատության բնագավառներում և կոչված է երաշխավորելու արդար, հրապարակային դատաքննություն որոշակի առանձնահատուկ գործերով և հանգամանքներում:[11] Դատական վերանայման ինստիտուտում ընդհանրապես, իսկ վերաքննության ինստիտուտում մասնավորապես, բողոքների գրավոր ընթացակարգերի առկայությունը ոչ միայն չի խաթարի արդար դատաքննության իրավունքի, այդ թվում հրապարակային դատավարության սկզբունքները, այլ նաև կնպաստի գործերի ողջամիտ քննության ապահովմանն ու արդյունավետ ու որակյալ արդարադատության իրականացմանը:

Նախագծով սահմանվում է վերաքննիչ բողոքը դատական նիստում քննելու վերաբերյալ միջնորդությունը գործին մասնակցող անձանց կողմից կարող է ներկայացնել վերաքննիչ բողոքում կամ վերաքննիչ բողոքի պատասխանում, դրանով սահմանելով նաև վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքը դատական նիստում քննելու մասին որոշում կայացնելու ժամկետ՝ վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո 1-ամսյա ժամկետ:

Նման կարգավորման նպատակը, վերաքննիչ բողոքը դատական նիստում քննելու անհրաժեշտության վերաբերյալ հիմնավորումները դատական քննության

[11] Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2012 թվականի ապրիլի 11-ի թիվ ՍԴՈ-1020 որոշում:

առարկա դարձնելու պարտականությունը ժամանակին իրականացնելն է՝ խուսափելով նաև դատավարական պրոցեսների անընդհատության ու ձգձգումները ռիսկերից:

Միաժամանակ, Նախագծով առաջարկվում է, գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննությունը դատական նիստում անցկացնելու դեպքում վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումն ուղարկելու հետ միաժամանակ բողոք բերող անձին և դատավարության մասնակիցներին դատաքննության ժամանակի ու վայրի մասին տեղեկացնելու պարտականությունը: Այս առումով, հարկ է նկատել, որ գործող կարգավորումներն ընդհանրապես վերաբերում էին գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուց հետո դատաքննության ծանուցման վերաբերյալ կարգավորումներ: Նման պայմաններում, նկատի ունենալով Նախագծով առաջարկվող ընդհանուր օրենսդրական կանխավարկածի ամրագրումը՝ սահմանվում է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշմամբ դատաքննության ծանուցման պարտականություն, եթե, միաժամանակ, վերաքննիչ բողոքը դատական նիստում քննելու վերաբերյալ դատարանը եկել է եզրահանգման:

Շարադրվածի լույսի ներքո անդրադառնալով առաջարկվող կարգավորման համանմանությամբ միջազգային փորձին հարկ է նշել, որ, օրինակ՝ ***Լատվիայի Վարչական դատավարության*** օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ *Վերաքննիչ դատարանը գործը քննում է կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով: Վերաքննիչ դատարանը վարչական գործը քննում է գրավոր ընթացակարգով: Դատարանը, գնահատելով դատավարության մասնակցի հիմնավորված միջնորդությունը, կարող է նշանակել գործի քննությունն իրականացնել բանավոր ընթացակարգով*[12]: Նմանատիպ մեկ այլ օրինակ կարող է ծառայել ***Լիտվայի Վարչական դատավարության օրենսգիրքը***, որի 141-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Վերաքննիչ բողոքը քննվում է գրավոր ընթացակարգով, այսինքն՝ առանց դատավարության մասնակիցներին դատական նիստի մասին ծանուցման, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գալիս է եզրահանգման, որ անհրաժեշտ է վերաքննիչ բողոքի քննությունը իրականացնել բանավոր*

[12] Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://likumi.lv/ta/id/55567-administrativa-procesa-likums, 2025 թվականի մայիսի 2-ի դրությամբ:

ընթացակարգով: Դատավարության մասնակիցները կարող են ներկայացնել գործը բանավոր քննելու պատճառաբանված միջնորդություն՝ վերաքննիչ բողոքում, վերաքննիչ բողոքի պատասխանում կամ այլ դատավարական փաստաթղթում, սակայն դատարանը կաշկանդված չէ այդ միջնորդությամբ[13]:

Վերոգրյալից բացի, ինչպես նաև նկատի ունենալով քննարկված ռազմավարական նպատակների կատարման տեսանկյունից իրականացվող գործողությունները, Նախագծով սահմանվում է վերաքննիչ բողոքների քննության ժամկետ, այն է՝ ողջամիտ ժամկետ, բայց ոչ ուշ, քան վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում: Հարկ է նկատել նախ, որ նմանատիպ կարգավորման առկայությունը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում ցույց է տվել իր արդյունավետությունն ու երկարատև դատավարական պրոցեսները արագ արդարադատության փոխակերպելու դրական կողմերը, որը ՀՀ վարչական դատավարությունում ներդնելու պայմաններում ակնկալվում է նման արդյունքներ: Մասնավորապես, նկատի ունենալով, որ սահմանվում է ընդհանուր վերաքննիչ բողոքների քննության գրավոր ընթացակարգ, որի պայմաններում դատական նիստեր անցկացնելու, դատական նիստերի հետաձգումների խնդիրը կրճատվում է, և դատավարական հիմնական գործողությունները սահմանափակվելու են գործի գրավոր դատաքննության և որոշման կայացման օրվա մասին կողմերին ծանուցելու մեջ, առաջարկվող 6 ամսյա ժամկետը ողջամիտ և բավարար ժամկետ կարող է համարվել դատական ակտերի կայացման և արդարադատության արդյունավետության բարձրացման համար: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով հնարավոր որոշ դեպքեր, երբ վերաքննիչ բողոքի քննության շրջանակում անհրաժեշտ լինի ապացույցներ հետազոտել, կողմերին բանավոր լսել և այլ դատավարական գործողություններ իրականացնել, Նախագծով առաջարկվում է, որ նշյալ ժամկետը դատարանի պատճառաբանված որոշմամբ կարող է երկարաձգվել մեկ անգամ ոչ ավել, քան 6 ամսյա ժամկետով:

Ընդ որում, հարկ է հատուկ նշել, որ նշված ժամկետներում դատարանը պարտավոր է ավարտել գործի քննությունը, իսկ սահմանված ժամկետում չավարտելը

[13] Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://e-seimas.lrs.lt/portal/legalAct/lt/TAD/TAIS.72290/asr, 2025 թվականի մայիսի 2-ի դրությամբ:

չի ենթադրելու գործի քննության դադարեցում, այսինքն դատարանը միևնույն է պետք է յուրքանչյուր գործող որոշում կայացնի՝ անկախ ժամկետային սահմանափակման հանգամանքից: Այս առնչությամբ, հարկ է նկատել, որ գործի քննությունը սահմանված ժամկետում չավարտելը պրակտիկայում կարող է առաջացնել իրավական տարբեր հետևանքներ: Այսպես, օրինակ՝ «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝

1) արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ.

2) դատավորի կողմից սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորի վարքագծի կանոնները խախտելը, բացառությամբ սույն օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով սահմանված կանոնի, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Նշված կարգավորումներից բխում է, որ դատավարական իրավունքի նորմի խախտումը, այդ թվում՝ սահմանված դատավարական ժամկետների խախտումները, որոնք հանգեցնում են գործի ողջամիտ ժամկետում քննության, հետևաբար նաև՝ արդար դատաքննության իրավունքի խախտմանը հիմք են դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար: Ուստի և, առաջրկվող դատավարական իրավունքի նորմի խախտման հետ կապված հիմնական հարաբերությունները շարադրվածի համատեքստում կարող է լինել օրինակ՝ «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի կարգավորման առարկան:

Դատավարական ժամկետների առումով, Նախագծով առաջարկվում է, որ դատական ակտի հրապարակման օրը դատարանի պատճառաբանված որոշմամբ կարող է հետաձգվել, սակայն այն չի կարող գերազանցել Օրենսգրքով վերաքննիչ բողոքների քննության համար սահմանված ժամկետները: Այս առումով, հարկ ենք համարում հատուկ ընդգծել, որ նման կարգավորումը ներկայում վերաքննիչ վարչական դատարանի խիստ ծանրաբեռնվածության պայմաններում կարող է նպաստել բողոքների քննության ողջամիտ ժամկետների պահպանմանը, քանի որ առաջարկվող ժամկետները բավարար չափով ի զորու են երաշխավորելու ողջամիտ

ժամկետներում արդարադատության իրականացումը, ուստի, այս ժամկետների պահպանման շրջանակում դատական ակտի հրապարակման օրվա փոփոխությունը վերապահված է դատարանի կողմից կոնկրետ փաստական հանգամանքների հաշվառմամբ պատճառաբանված որոշում կայացնելուն:

Անդրադառնալով Նախագծով առաջարկվող վճռաբեկ բողոքի վերադարձնելու հարցը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի մեկ դատավորի կազմով լուծելու իրավական հնարավորության նախատեսման հարկ է հատուկ նշել, որ վճռաբեկ բողոքի վերադարձնելու իրավական այնպիսի հիմքերի պայմաններում, որոնք իրենց բովանդակության ուղղելի թերություններ են, կարող են լուծվել մեկ դատավորի կազմից: Դրանով նախ անհարկի ծանրաբեռնվածություն չի առաջանա Վճռաբեկ դատարանի համար, միաժամանակ, հնարավորություն կտրվի վճռաբեկ բողոքին օրենսդրությամբ ներկայացվող պահանջների ապահովման համար ***վճռաբեկության կարգով բողոքների քննության կոլեգիալությունն ապահովել,*** միաժամանակ երաշխավորելով առանց քննության թողնելու կամ վարույթ ընդունելը մերժելու դեպքում վճռաբեկ բողոքի քննության կոլեգիալությունը: Այս առումով, հարկ է նկատել, որ նման հնարավորություն գործող դատավարական օրենսդրությամբ նախատեսված է քրեական գործերով վճռաբեկ բողոքները վերադարձնելու վերաբերյալ, որն արդյունավետորեն կիրառվում է:

Վերաքննության ինստիտուտի սահմանափակման առնչությամբ՝ Նախագծով առաջարկվել է սահմանել որոշակի բնույթի գործերով կոնկրետ սուբյեկտի կողմից վերաքննիչ բողոք ներկայացնելու իրավունքի սահմանափակում: Մասնավորապես, հիմք ընդունելով վերաքննիչ դատարանի դերը դատավարության մեջ, վարչական մարմինների կողմից հանրային իրավական դրամական պահանջներով ներկայացված գործերի քանակը և դրանց 80 տոկոսից ավելին մինչև 300.000 դրամը չգերազանցելը՝ առաջարկվել է նախատեսել սահմանափակում առ այն, որ վարչական մարմինները չեն կարող վերաքննիչ բողոք ներկայացնել 300.000 դրամը չգերազանցող հանրային իրավական դրամական պահանջներով վիճարկման հայցի հիման վրա կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտերը ակտերի դեմ: Ընդ որում, շեմը՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկը, ընտրվել է ինչպես հաշվի

առնելով Դատական դեպարտամենտից ստացված տեղեկատվությունը, այնպես էլ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով արդեն իսկ գործող կարգավորումը:

Առաջարկվող կարգավորումը երաշխիքային է նաև այնքանով, որքանով՝

- ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վերաքննիչ բողոք ներկայացնելու իրավունքը պահպանվել է՝ անկախ հանրային իրավական դրամական պահանջի չափից,
- սահմանափակումը նախատեսվել է համեմատաբար փոքր արժեք ունեցող գործերի համար, այն է՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկը չգերազանցող դրամական պահանջներով. ընդ որում, պետք է ներկայացված հայցով նշված գումարը չգերազանցի նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկը, այլ ոչ թե օրինակ բավարարված հայցապահանջն այդքան լինի:

«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի» նախագծի անցումային դրույթների մասով.

Հիմք ընդունելով Վերաքննիչ վարչական դատարանի ծանրաբեռնվածությունը և նպատակ ունենալով առավելագույնս ապահովել առաջարկվող կարգավորումների արդյունավետ կիրառումը՝ վերաքննիչ բողոքների քննության ժամետ նախատեսող դրույթների մասով նախատեսվել է վեցամսյա անցումային դրույթ, ինչը հնարավորություն կտա դատավորներին ավարտել իրենց վարույթում առկա բողոքների քննությունը, նվազեցնել ծանրաբեռնվածությունը՝ ստեղծելով հաջորդիվ ներկայացվող վերաքննիչ բողոքների մասով քննության օրենսդրական ժամկետները պահպանելու իրական հնարավորություն:

Միաժամանակ, ծանրաբեռնվածության նվազեցման նույն նպատակին համահունչ՝ նախատեսվել է նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկը չգերազանցող դրամական պահանջներով վիճարկման հայցի քննության արդյունքում կայացված դատական ակտերի դեմ վարչական մարմինների կողմից վերաքննիչ բողոք բերելու սահմանափակումը կիրառել նաև հետադարձության կարգով՝ այն տարածելով մինչև օրենքի ուժի մեջ մտնելը հարուցված գործերով կայացված՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վրա: Ավելին՝ օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ ներկայացված, բայց դեռևս վարույթ չընդունված, ինչպես նաև քննության

փուլում գտնվող բողոքների մասով նույնպես նախատեսվել են անցումային դրույթներ: Մասնավորապես, առաջարկվում է Վերաքննիչ վարչական դատարան ներկայացված, բայց դեռևս վարույթ չընդունված բողոքների ընդունումը մերժել՝ Օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-ին կետով սահմանված հիմքով, իսկ դատաքննության փուլում գտնվող բողոքների դեպքում՝ վերաքննիչ վարույթը կարճել: Այս անցումային դրույթները ևս դրական կանդրադառնան Վերաքննիչ վարչական դատարանի ծանրաբեռնվածության նվազեցման՝ նախագծով հետապնդվող նպատակի իրացման վրա:

Միաժամանակ 2025 թվականի ընթացքում Վարչական դատարան ներկայացված 25.954 գործից միայն 14.069-ը (54%) կազմել են ՆԳՆ Ոստիկանության Պարեկային ծառայության ակտերն անվավեր ճանաչելու պահանջները, ինչպես նաև մեծ թիվ են կազմել նաև Երևանի քաղաքապետարանի վարչական ակտերն անվավեր ճանաչելու գործերը. 2025 թվականի ընթացքում Երևանի քաղաքապետարանի դեմ կայացվել է 301 դատական ակտ, որից 209 գործով հայցը բավարարվել է, իսկ 92 գործով՝ մերժվել:

Հաշվի առնելով վիճակագրական տվյալները՝ անցումային դրույթները չեն տարածվել Ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության և Երևանի քաղաքապետարանի դեմ կայացված՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկը չգերազանցող հանրային իրավական դրամական պահանջով վիճարկման հայցի հիման վրա կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտերի վրա:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները.

Նախագիծը մշակվել է Արդարադատության նախարարության և «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի կողմից:

4. Ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունման դեպքում ակնկալվում է վերաքննիչ բողոքների գրավոր ընթացակարգով քննության միջոցով թոթափել դատարանների ծանրաբեռնվածությունը, ապահովել գործերի քննության ողջամիտ՝ առավել կարճ

ժամկետներ, վճռաբեկ բողոքները վերադարձնելու հարցը դատական կազմի մեկ դատավորի կազմով լուծելով նպաստել կոլեգիալության նպատակների ճիշտ երաշխավորմանը:

Միաժամանակ, առաջարկվող օրենսդրական փոփոխությունների պայմաններում հնարավոր կլինի թեթևացնել վերաքննիչ վարչական դատարանի ծանրաբեռնվածությունը՝ փոքր արժեք ունեցող գործերով բողոքարկումների համար բողոքարկման սահմանափակման նախատեսման միջոցով:

5. Նախագծի ընդունման կապակցությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտության և ծախսերում սպասվելիք փոփոխությունների մասին.

Նախագծի ընդունման կապակցությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն առկա չէ, իսկ պետական բյուջեում եկամուտների կամ ծախսերի էական փոփոխություն չի նախատեսվում:

6. Նախագծերի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը.

Նախագծերի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտեր ընդունել անհրաժեշտ չէ, ինչպես նաև պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

7. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ.

Նախագծի ընդունումը բխում է ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2021-2026 թվականների ռազմավարությունից, որում նշվում է, որ նախորդ տարիների ռազմավարական նպատակների հաշվառմամբ՝ դեռևս անհրաժեշտ են մի շարք գործողություններ, ուղղված դատական համակարգի անկախության, անկողմնակալության և դատական համակարգի նկատմամբ հասարակության վստահության բարձրացմանը, ***դատարանների ծանրաբեռնվածության թեթևացմանը***, արդարադատության արդյունավետության բարձրացմանը, գործերի

ողջամիտ ժամկետներում քննության երաշխավորմանը, և այլ քայլեր, որոնք էապես անհրաժեշտ են Հայաստանի Հանրապետության դատաիրավական համակարգի զարգացման համար: Այս համատեքստում, ՀՀ կառավարության 2021-2026 ծրագրում նշվել է, որ վարչական արդարադատության ոլորտում վարչական և վարչական վերաքննիչ դատարանների բեռնաթափման համար կարևորվելու են վարչական դատավարության խնդիրների վեր հանումը և դրանց օրենսդրական լուծումները:[14]

Ինչ վերաբերում է առաջարկվող քաղաքացիադատավարական կարգավորումներին, հարկ է նկատել, որ ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2021-2026 թվականների ռազմավարությամբ նշվել է Քաղաքացիական դատավարության օրենսգրքի կիրառման արդյունքում ծագած խնդիրների վերհանման և գույքագրման անհրաժեշտությունը, որը կարող է հիմք ծառայել Քաղաքացիական դատավարության օրենսգրքում իրավակիրառ պրակտիկայի կարիքներից բխող անհրաժեշտ փոփոխությունների կատարման համար:

Այսպիսով, Վարչական և Քաղաքացիական դատավարության օրենսգրքի գործնական կիրառման կապակցությամբ մոնիթորինգի իրականացումը հնարավորություն է տալիս Արդարադատության նախարարությանը վեր հանել Օրենսգրքի դրույթների կիրառման կապակցությամբ գործնականում ծագող բոլոր խնդիրները: Այս համատեքստում, ըստ անհրաժեշտության մշակվում են համապատասխան իրավական ակտեր գործնական խնդիրների լուծման կապակցությամբ:

Նախագծերն ընդգրկում է Օրենսգրքի դրույթների գործնական կիրառման արդյունքում առաջացած խնդիրները, ինչպես նաև առաջադրված ռազմավարական նպատակների ապահովման տեսանկյունից արդարադատության որակի բարձրացմանն ուղղված կարգավորումներ են առաջարկվում:

[14] Տե՛ս ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագիր, 5.3 կետ, էջ 81:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 2. 2013 թվականի դեկտեմբերի 5-ի Հայաստան Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 130-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկը չգերազանցող հանրային իրավական դրամական պահանջով վիճարկման հայցի հիման վրա կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունի ֆիզիկական կամ իրավաբանական անձը: Սույն մասով սահմանված դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունի նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:»:

Հոդված 2. Օրենսգրքի 135-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4 . Գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննությունը դատական նիստում անցկացնելու դեպքում վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումն ուղարկելու հետ միաժամանակ բողոք բերող անձը և դատավարության մասնակիցները տեղեկացվում են գործի դատաքննության ժամանակի ու վայրի մասին:»:

Հոդված 3. Օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին կետով.

«5.1) վարչական մարմնի կողմից վերաքննիչ բողոք է ներկայացվել նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկը չգերազանցող հանրային իրավական

դրամական պահանջով վիճարկման հայցի հիման վրա կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ.»:

Հոդված 4. Օրենսգրքի 140-րդ հոդվածում.

3) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1. Վերաքննիչ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքները քննում և որոշում է կայացնում բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում: Նշված ժամկետը վերաքննիչ դատարանի պատճառաբանված որոշմամբ կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև չորս վեց ամիս ժամկետով:»:

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1 մասով.

«1.1. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետը չի տարածվում սույն օրենսգրքով սահմանված վերաքննիչ բողոքների քննության հատուկ ժամկետների վրա:»:

Հոդված 5. Օրենսգրքի 141-րդ հոդվածում.

1) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ .

«3 . Վարչական դատարանի դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները քննվում և դրանց վերաբերյալ որոշումները կայացվում են գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ վերաքննիչ դատարանը դատավարության մասնակցի հիմնավորված միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ վերաքննիչ բողոքի քննությունն արդյունավետ իրականացնելու նպատակով այն անհրաժեշտ է իրականացնել դատական նիստում:».

3) լրացնել հետևյալ բովանդակության նոր 4-6-րդ մասերով .

«4. Վերաքննիչ բողոքը դատական նիստում քննելու վերաբերյալ միջնորդությունը դատավարության մասնակիցը կարող է ներկայացնել վերաքննիչ բողոքում կամ մինչև վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու ժամկետի ավարտից հետո 1-ամսյա ժամկետում:

5. Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո որոշում է կայացնում վերաքննիչ բողոքը դատական նիստում կամ գրավոր ընթացակարգով քննելու վերաբերյալ:

6. Վերաքննիչ բողոքը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:»:

Հոդված 6. Օրենսգրքի 142-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ~~ն~~.

«**Հոդված 142. Վերաքննիչ բողոքի քննությունը դատական նիստում**

1. Վերաքննիչ դատարանում բողոքի քննությունը դատական նիստում իրականացվում է վարչական դատարանում դատաքննության իրականացման կանոններին համապատասխան՝ սույն հոդվածի առանձնահատկությունների հաշվառմամբ:

2. Վերաքննիչ բողոքը դատական նիստում քննելու վերաբերյալ որոշում կայացվելու դեպքում բողոք բերած անձը, ինչպես նաև դատավարության մասնակիցները պատշաճ ծանուցվում են նիստի ժամանակի և վայրի մասին: Նրանց չներկայանալն արգելք չէ գործի դատաքննության համար:

3. Դատաքննությունը վերաքննիչ դատարանում սկսվում է նախագահող դատավորի զեկուցումով: Նախագահող դատավորը շարադրում է բողոքի և բողոքի դեմ ներկայացված պատասխանի ամփոփ բովանդակությունը: Կոլեգիալ կազմի դատավորներն իրավունք ունեն հարցեր տալու նախագահող դատավորին, դատավարության մասնակիցներին, որից հետո գործի դատաքննությունը ավարտվում է, և հայտարարվում են դատական ակտը հրապարակելու վայրն ու ժամանակը:»:

Հոդված 7 . Օրենսգրքի 142.1-ին հոդվածում.

3) 1-ին մասն ուժը կորցրած ճանաչել.

4) 3-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Վերաքննիչ դատարանը ~~Ս~~սույն մասով նախատեսված դատական ակտի հրապարակման օրը ~~դատարանի պատճառաբանված որոշմամբ~~ կարող է փոփոխել

պատճառաբանված որոշմամբ՝ բողոքի քննության համար սահմանված ժամկետների շրջանակներում ~~երկարաձգվել~~՝ այդ մասին տեղեկացնելով դատավարության մասնակիցներին~~, սակայն այն չի կարող գերազանցել սույն օրենսգրքով վերաքննիչ բողոքների քննության համար սահմանված ժամկետները~~:»:

Հոդված 8 . Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն հոդվածով սահմանված դեպքերի:

2. Սույն օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվանից երեք ամիս հետո, բացառությամբ Ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության և Երևանի քաղաքապետարանի դեմ կայացված՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկը չգերազանցող հանրային իրավական դրամական պահանջով վիճարկման հայցի հիման վրա կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտերի, որոնց մասով օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

~~Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ ներկայացված և վարույթ ընդունված վերաքննիչ բողոքների քննությունն իրականացվում է գրավոր ընթացակարգով և դատավարության մասնակիցները սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 1-ամսյա ժամկետում ծանուցվում են բողոքի քննության արդյունքում կայացվելիք դատական ակտի հրապարակման օրվա մասին՝ առանց նշանակված դատական նիստերն անցկացնելու անհրաժեշտության, բացառությամբ եթե վերաքննիչ վարչական դատարանը սույն մասում նշված ծանուցումից հետո 15-օրյա ժամկետում դատավարության մասնակցի հիմնավորված միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ գալիս է եզրահանգման, որ անհրաժեշտ է բողոքի քննությունը շարունակել բանավոր ընթացակարգով:~~

3. Սույն օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով սահմանված կարգավորումները տարածվում են նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ներկայացված

հայցադիմումների հիման վրա հարուցված գործերի քննության արդյունքում կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտերի վրա:

~~4. Սույն օրենքի 45-րդ հոդվածով սահմանված գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքների քննության ժամկետների վերաբերյալ իրավակարգավորումները գործում են միայն սույն օրենքի 4-րդ հոդվածի և 9-րդ հոդվածի 2-րդ մասի ուժի մեջ մտնելուց2026 թվականի հունվարի 1-ից հետո վարույթ ընդունված վերաքննիչ բողոքների քննության նկատմամբ:~~

4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկը չգերազանցող հանրային իրավական դրամական պահանջով վիճարկման հայցի հիման վրա կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ ներկայացված և դեռևս վարույթ չընդունված վերաքննիչ բողոքների ընդունումը ենթակա է մերժման՝ Օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-ին կետով սահմանված հիմքով, իսկ վարույթ ընդունված, բայց դատաքննությունը դեռևս չավարտված վերաքննիչ բողոքներով վերաքննիչ վարույթը ենթակա է կարճման: Դատաքննությունն ավարտված լինելու, իսկ բողոքը գրավոր ընթացակարգով քննելիս՝ դատական ակտի հրապարակման օր նշանակված լինելու դեպքերում դատաքննությունը վերսկսվում է, և կայացվում է վերաքննիչ վարույթը կարճելու մասին որոշում: Սույն հոդվածով նախատեսված կարգավորումից բացառություն են համարվում սույն օրենքի 1-ին հոդվածով Օրենսգրքի 130-րդ հոդվածում լրացվող 1.1-ին մասով նախատեսված դատական ակտերի դեմ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքները:

5. Սույն օրենքի 4-րդ հոդվածը և 7-րդ հոդվածի 2-րդ մասը ուժի մեջ են մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

6. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ ներկայացված և վարույթ ընդունված վերաքննիչ բողոքների քննությունն իրականացվում է գրավոր ընթացակարգով և դատավարության մասնակիցները սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 1-ամսյա ժամկետում ծանուցվում են բողոքի քննության արդյունքում կայացվելիք դատական ակտի հրապարակման օրվա մասին՝ առանց նշանակված դատական նիստերն անցկացնելու անհրաժեշտության, բացառությամբ եթե վերաքննիչ վարչական

դատարանը սույն մասում նշված ծանուցումից հետո 15-օրյա ժամկետում դատավարության մասնակցի հիմնավորված միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ գալիս է եզրահանգման, որ անհրաժեշտ է բողոքի քննությունը շարունակել բանավոր ընթացակարգով:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ (Կ-1205-08.12.2025-ՊԻ-011/1) ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ (Կ-1205[1]-08.12.2025-ՊԻ-011/1) ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ				
1.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 2-րդ, 4-րդ և 6-րդ հոդվածներ**	Իրավական որոշակիության ապահովման նպատակով առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ կերպ՝ «Հոդված 2. Օրենսգրքի 135-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.», 4-րդ և 8-րդ հոդվածներում «բովանդակության»	**Ընդունվել է:** Նախագծի 2-րդ, 4-րդ և 6-րդ հոդվածներում կատարվել են տեխնիկական ուղղումներ:	**Ընդունվել է:**

			բառը փոխարինել «բովանդակությամբ»:		
2.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 3-րդ և 4-րդ հոդվածներ**	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Հոդվածների և մասերի համարները տեքստից բաժանվում են միջակետերով, իսկ հոդվածների կետերի համարները՝ փակագծերով»: Առաջարկում ենք սույն պահանջը պահպանել «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 3-րդ հոդվածով նախատեսվող Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 137-րդ հոդվածում նոր լրացվող 5.1-ին մասում և Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող՝ Օրենսգրքի 140-րդ հոդվածում նոր լրացվող 1.1-ին մասում:	**Ընդունվել է:** Նախագծի **3-րդ և 4-րդ հոդվածներում ապահովվել են** «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված պահանջները:	**Ընդունվել է:**
3.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 4-րդ հոդված**	Որոշակիության նպատակով Նախագծի 4-րդ հոդվածով	**Ընդունվել է:** Նախագծի 4-րդ հոդվածով	**Ընդունվել է:**

			առաջարկվող՝ Օրենսգրքի 140-րդ հոդվածում առաջարկվում է նշել, որ դրանում նշված ժամկետը վերաքննիչ դատարանի պատճառաբանված որոշմամբ կարող է երկարաձգվել մեկ անգամ: Ինչպես նաև հաշվի առնելով Վերաքննիչ դատարանի ծանրաբեռնվածությունը՝ առաջարկում ենք բողոքները քննելու 6-ամսյա ժամկետը թույլատրել երկարաձգել ևս վեց ամսով՝ չորս ամսվա փոխարեն:	առաջարկվող՝ Օրենսգրքի 140-րդ հոդվածում «երկարաձգվել» բառից հետո լրացվել է «մեկ անգամ» բառերով, իսկ «չորս» բառը փոխարինվել է «վեց» բառով:	
4.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 5-րդ հոդված**	Առաջարկում ենք Նախագծի 5-րդ հոդվածով առաջարկվող Օրենսգրքի 141-րդ հոդվածի 4-րդ մասից հանել «մինչև» բառը՝ ճիշտ շարահյուսության նկատառումներով:	**Ընդունվել է:** Նախագծի 5-րդ հոդվածով առաջարկվող՝ Օրենսգրքի 141-րդ հոդվածի 4-րդ մասից հանվել է «մինչև» բառը:	**Ընդունվել է:**
5.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 7-րդ հոդված**	Առաջարկում ենք վերախմբագրել Օրենսգրքի 142.1-ին հոդվածի 3-րդ մասը՝ կիրառելի ժամանակահատվածը որոշակիացնելու նպատակով: Ըստ այդմ, առաջարկում ենք նախագծի 7-րդ հոդվածով առաջարկվող Օրենսգրքի 142.1-ին հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3.	**Ընդունվել է:** Նախագծի 7-րդ հոդվածով նախատեսվող՝ Օրենսգրքի 142.1-ին հոդվածի 3-րդ մասը վերախմբագրվել է:	**Ընդունվել է:**

			Վերաքննիչ դատարանը սույն մասով նախատեսված դատական ակտի հրապարակման օրը կարող է փոփոխել պատճառաբանված որոշմամբ՝ բողոքի քննության համար սահմանված ժամկետների շրջանակներում՝ այդ մասին տեղեկացնելով դատավարության մասնակիցներին:»:		
6.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 8-րդ հոդված**	Հաշվի առնելով պրակտիկ դեպքերն ու որոշ տեսակի դեպքերի մասով բացառություն սահմանելու անհրաժեշտությունը՝ առաջարկում ենք Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասում «տասներորդ օրը» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածով սահմանված դեպքերի:» բառերով:	**Ընդունվել է:** Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասում կատարվել է առաջարկվող լրացումը:	**Ընդունվել է:**
7.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 8-րդ հոդված**	2025 թվականի ընթացքում Վարչական դատարան ներկայացված 25.954 գործից միայն 14.069-ը (54%) կազմել են ՆԳՆ Ոստիկանության Պարեկային ծառայության ակտերն անվավեր ճանաչելու պահանջները: Մեծ թիվ են կազմել նաև Երևանի քաղաքապետարանի վարչական ակտերն անվավեր ճանաչելու	**Ընդունվել է:** Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրվել է առաջարկվող բովանդակությամբ:	**Ընդունվել է:**

			գործերը. 2025 թվականի ընթացքում Երևանի քաղաքապետարանի դեմ կայացվել է 301 դատական ակտ, որից 209 գործով հայցը բավարարվել է, իսկ 92 գործով՝ մերժվել: Ըստ այդմ, առաջարկում ենք Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանել հետևյալ բացառությունը. «2. Սույն օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվանից երեք ամիս հետո, բացառությամբ Ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության և Երևանի քաղաքապետարանի դեմ կայացված՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկը չգերազանցող հանրային իրավական դրամական պահանջով վիճարկման հայցի հիման վրա կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտերի, որոնց մասով օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:»:		

8.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 8-րդ հոդված**	Նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված անցումային դրույթը, կարծում ենք՝ կարող է խնդրահարույց լինել իրավական որոշակիության տեսանկյունից, քանի որ հստակ սահմանված չէ գործերի այն շրջանակը, որոնց վրա տարածվում են Նախագծով նախատեսված կարգավորումները: Մասնավորապես, քննարկվող անցումային դրույթում կիրառված «հարուցված» եզրույթը կարող է հանգեցնել տարաբնույթ մեկնաբանությունների՝ արդյոք այն վերաբերում է հայցադիմումը վարույթ ընդունելու, թե հայցադիմումը դատարան մուտքագրելու փուլին: Հաշվի առնելով նշվածը՝ առաջարկում ենք վերանայել տվյալ ձեւակերպումը եւ այն հստակեցնել՝ իրավակիրառ պրակտիկայում հնարավոր անհամաձայնություններից խուսափելու նպատակով: Ըստ այդմ, առաջարկում ենք նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ մասի «գործերի» բառից հետո լրացնել «քննության արդյունքում կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտերի» բառերով:	**Ընդունվել է:** Նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ մասում կատարվել է առաջարկվող լրացումը:	**Ընդունվել է:**

9.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 8-րդ հոդված**	Նկատի ունենալով, որ Նախագծի 8-րդ հոդվածի այլ մասով նախատեսվում են Նախագծի 4-րդ և 7-րդ հոդվածների, այն է՝ գրավոր ընթացակարգի կիրառման անցումային դրույթներ՝ կրկնությունից խուսափելու նպատակով առաջարկում ենք հանել Նախագծի 8-րդ հոդվածի 4-րդ մասը:	**Ընդունվել է:** Նախագծի 8-րդ հոդվածի 4-րդ մասը հանվել է:	**Ընդունվել է:**
10.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 8-րդ հոդված**	Վերաքննիչ վարչական դատարանի ծանրաբեռնվածությունը նվազեցնելու համատեքստում նպատակահարմար է կարգավորել օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկը չգերազանցող դրամական պահանջներով կայացված դատական ակտերի դեմ վարչական մարմինների կողմից ներկայացված վերաքննիչ բողոքների վերաբերյալ կարգավորումներ: Ըստ այդմ, առաջարկում ենք նախագծի 8-րդ հոդվածը լրացնել նոր՝ 4-րդ մասով՝ այն բովանդակությամբ, որ օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ նվազագույն աշխատավարձի	**Ընդունվել է:** Նախագծի 8-րդ հոդվածը լրացվել է նոր՝ 4-րդ մասով:	**Ընդունվել է:**

			երեքհարյուրապատիկը չգերազանցող դրամական պահանջներով կայացված դատական ակտերի դեմ վարչական մարմինների կողմից ներկայացված, բայց դեռևս վարույթ չընդունված բողոքների ընդունումը ենթակա է մերժման, իսկ դատաքննության փուլում գտնվող բողոքների դեպքում՝ վերաքննիչ վարույթը պետք է կարճվի:		
11.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 8-րդ հոդված**	Վերաքննիչ վարչական դատարանի կողմից բողոքների քննության ժամկետները պահպանելու իրատեսականությունն ապահովելու համար առաջարկվում է այդ հոդվածների մասով նախատեսել օրենքի հրապարակումից հետո վեցամսյա ժամկետով անցումային դրույթ, ինչը թույլ կտա դատավորներին ավարտել իրենց մոտ առկա գործերն ու հաջորդիվ ներկայացված բողոքների մասով պահպանել դրանց քննության ժամկետները: Ըստ այդմ, առաջարկում ենք՝ նախագծի 8-րդ հոդվածը լրացնել նոր՝ 5-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.	**Ընդունվել է:** Նախագծի 8-րդ հոդվածը լրացվել է նոր՝ 5-րդ մասով:	**Ընդունվել է:**

			«5. Սույն օրենքի 4-րդ հոդվածը և 7-րդ հոդվածի 2-րդ մասը ուժի մեջ են մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:»:		
12.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 8-րդ հոդված**	Վերաքննիչ դատարանում բողոքների քննության գրավորի ընթացակարգի վերաբերյալ անցումային դրույթների տրամաբանական հաջորդականությունն ապահովելու նպատակով առաջարկում ենք Նախագծի 8-րդ հոդվածը լրացնել նոր 6-րդ մասով և Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումը նախատեսել այդ մասում:	**Ընդունվել է:** Նախագծի 8-րդ հոդվածը լրացվել է նոր՝ 6-րդ մասով:	**Ընդունվել է:**
13.	**Պատգամավոր Վլադիմիր Վարդանյան**	**Նախագծի 1-ին և 8-րդ հոդվածներ**	Առաջարկվում է նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկը չգերազանցող հանրային իրավական դրամական պահանջով վիճարկման հայցի հիման վրա կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունքի սահմանափակումը չտարածել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նկատմամբ՝ հաշվի առնելով վերջինիս կողմից	**Ընդունվել է:** Նախագծի 1-ին և 8-րդ հոդվածներում կատարվել են համապատասխան լրացումներ:	**Ընդունվել է:**

			իրականացվող վարույթների բովանդակային առանձնահատկությունները, քննվող իրավախախտումներում կոռուպցիոն բարձր ռիսկերի առկայությունը և Հանձնաժողովի կողմից կիրառվող վարչական տույժերի կանխարգելիչ նշանակությունը: Նույն տրամաբանությամբ, առաջարկվում է Օրենքի անցումային՝ 8-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսել բացառություն՝ Օրենսգրքի 130-րդ հոդվածում լրացվող 1.1-ին մասով նախատեսված դատական ակտերի դեմ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքների մասով:		
	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ				
1.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի վերնագիր**	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրում առաջարկվում է «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ» բառերը փոխարինել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառով՝ հիմք	**Ընդունվել է:** Նախագծի վերնագրում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

			ընդունելով այն հանգամանքը, որ նախագծով կատարվում է մեկ փոփոխություն:		
2.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 1-ին հոդված**	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով չի կարգավորում վճռաբեկ բողոքը վերադարձնելու հարցի լուծումը վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատում: Բացի այդ, այն անհիմն կրկնություն է առաջանում Քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի 2-րդ մասում լրացվող նոր առաջին նախադասությամբ սահմանված դրույթի հետ: Ըստ այդմ, Նախագծի 1-ին հոդվածում առաջարկում ենք՝ մեկ հոդվածով նախատեսել վճռաբեկ բողոքը վերադարձնելու հարցի լուծումը վճռաբեկ դատարանի	**Ընդունվել է:** Նախագծի 1-ին հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

			հակակոռուպցիոն պալատում ևս:		
3	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 2-րդ հոդված**	Վերոգրյալ կետում նշված առաջարկությունների ընդունման պարագայում «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի 2-րդ մասում կատարվող լրացման անհրաժեշտությունը կվերանա եւ կբացառվի քննարկվող նախագծում անհիմն կրկնությունը: Միաժամանակ, հարկ է նշել, որ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի 2-րդ մասում լրացվող նոր	**Ընդունվել է** Նախագծի 2-րդ հոդվածը հանվել է: Արդյունքում փոփոխվել է հաջորդ հոդվածների համարակալումը:	**Ընդունվել է:**

			նախադասությունը, այն է. «2. Վճռաբեկ բողոքը վերադարձնելու հարցը լուծվում է միանձնյա՝ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի մեկ դատավորի կազմով, իսկ հակակոռուպցիոն պալատում՝ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության դատական կազմի մեկ դատավորի կազմով:», իր բովանդակությամբ ավելի համապատասխան է նույն օրենսգրքի 27-րդ հոդվածում ներառված լինելուն:		
4.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագիծը լրացնել նոր հոդվածով**	Օրենսգրքում 2026 թվականի փետրվարի 11-ի թիվ ՀՕ-29-Ն օրենքով կատարված լրացումներից բխում է, որ դատական վեճերի առկայության դեպքում անգամ կարևորվել է հանրության գերակա շահի ապահովման նպատակով սեփականության օտարման հիմք հանդիսացող գործունեության շարունակականությունը, քանի որ սահմանափակվել է այդ գործերով հայցի ապահովման այնպիսի միջոց կիրառելու հնարավորությունը, որը կարող է հանգեցնել սեփականության օտարման հիմք հանդիսացող գործունեության արգելմանը, կասեցմանը, դադարեցմանը կամ	**Ընդունվել է** Նախագծում կատարվել է համապատասխան լրացում	**Ընդունվել է:**

			խոչընդոտմանը: Մինչդեռ Օրենսգիրքը ուղղակիորեն չի նախատեսում վերաքննության փուլում համապատասխան հարցերին անդրադառնալու, ըստ այդմ՝ հայցի ապահովման միջոցը վերացնելու, փոխարինելու, ձևափոխելու կամ հակընդդեմ ապահովում կիրառելու ուղղակի հնարավորություն, առավել ևս այն դեպքերում, երբ հայցը մերժվել է ակնհայտ անհիմն լինելու հիմքով: Ըստ այդմ, որպես տրամաբանական շարունակություն՝ առաջարկում ենք Նախագիծը լրացնել նոր՝ 2-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ. «Օրենսգրքի 385-րդ հոդվածում՝ 1) վերնագիրը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «Որոշման կատարման ապահովումը և հայցի ապահովումը». 2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին և 1.2-րդ մասերով. «1.1. Վերաքննիչ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ մինչև բողոքի քննության արդյունքով դատական ակտ կայացնելը վերացնում է հայցի ապահովման		

			միջոցը, եթե այն կիրառվել է հանրության գերակա շահերի հիմքով սեփականության օտարման դիմաց փոխհատուցման չափի վիճարկման կամ օտարման գործընթացի կամ օտարվող կամ օտարված գույքի հետ կապված գործերով, ներառյալ՝ նման գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման կամ վիճարկման հետ կապված գործերով, և եթե բողոքարկվող դատական ակտով հայցը մերժվել է արագացված դատաքննության կիրառմամբ: 1.2. Սույն հոդվածի 1.1-ին մասով սահմանված դեպքերում Վերաքննիչ դատարանն իրավունք ունի մինչև բողոքի քննության արդյունքով դատական ակտ կայացնելը գործին մասնակցող անձի միջնորդությամբ հայցի ապահովման մեկ միջոցը փոխարինելու մեկ այլ միջոցով, ձևափոխելու այն կամ կիրառելու հակընդդեմ ապահովում՝ պահպանելով սույն օրենսգրքի 13-րդ գլխի կանոնները:». 3) 2-րդ մասում «Որոշման կատարման ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննվում է» բառերը փոխարինել «Որոշման		

			կատարման ապահովման միջոց կիրառելու, ինչպես նաև կիրառված հայցի ապահովման միջոցը սույն հոդվածի 1.1-ին մասով սահմանված հիմքով վերացնելու վերաբերյալ միջնորդությունները քննվում են» բառերով:»: Միաժամանակ, հայցի ապահովման միջոցը վերացնելու հարցի քննարկումն առաջարկվում է նախատեսել առանց դատական նիստ անցկացնելու, քանի որ ի տարբերություն հայցի ապահովման միջոցը փոխարինելու, ձևափոխելու կամ հակընդդեմ ապահովում կիրառելու դեպքերի, երբ դատարանը պետք է քննարկման առարկա դարձնի դրանց անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը՝ պարզելով անհրաժեշտ այլ հանգամանքներ, վերացման դեպքում բացակայում է լրացուցիչ փաստեր քննարկելու կամ ուսումնասիրելու անհրաժեշտությունը, և դատարանը պետք է պարզի Օրենսգրքի 385-րդ հոդվածի 1.1-ին մասում նշված պայմանների առկայությունն ու վերացնի կիրառված ապահովումը:		

5.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագիծը լրացնել նոր հոդվածով**	Վերաքննիչ դատարանի կայացրած որոշումների օրինական ուժի մեջ մտնելու հետ կապված հարցերը կարգավորված են Օրենսգրքի 387-րդ հոդվածով, որը հրապարակման պահից օրինական ուժի մեջ մտնելու կանոն նախատեսում է միայն որոշակի դատական ակտերի համար: Մինչդեռ գործնականում կարող են լինել դեպքեր, երբ հրապարակման պահից որոշման օրինական ուժի մեջ մտնելը կարող է պայմանավորված լինել գործին մասնակցող անձի համար ծանր հետևանքներ առաջացնելու ռիսկը վերացնելու անհրաժեշտությամբ: Հարկ է նկատել, որ համանման կարգավորում նախատեսված է առաջին ատյանի դատարանի վճիռների համար՝ Օրենսգրքի 198-րդ հոդվածի 9-րդ մասով: Ըստ այդմ, առաջարկում ենք Նախագիծը լրացնել նոր՝ 3-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ. «Օրենսգրքի 387-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Վերաքննիչ	**Ընդունվել է** Նախագծում կատարվել է համապատասխան լրացում	**Ընդունվել է:**

			դատարանի կայացրած որոշումը բացառիկ դեպքերում կարող է հրապարակման պահից հայտարարվել օրինական ուժի մեջ մտած, եթե դա չանելն անխուսափելիորեն կառաջացնի ծանր հետևանքներ գործին մասնակցող անձի համար:»:		
6.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 3-րդ (լրամշակված 4-րդ) հոդված**	Առաջարկում ենք սահմանել, որ վերաքննիչ դատարանի կողմից հանրության գերակա շահերի հիմքով սեփականության օտարման դիմաց փոխհատուցման չափի վիճարկման կամ օտարման գործընթացի կամ օտարվող կամ օտարված գույքի հետ կապված գործերով կիրառված հայցի ապահովման միջոցը վերացնելու, հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու, հայցի ապահովման միջոցը ձևափոխելու, հակընդդեմ ապահովման միջոցներ կիրառելու լիազորություն սահմանող նորմերի մասով օրենքը ուժի մեջ է մտնում օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և դրանց տալ նաև հետադարձություն, քանի որ դրանք բարելավվում են անձանց իրավական վիճակը:	**Ընդունվել է** Նախագծի 3-րդ (լրամշակված 4-րդ) հոդվածում կատարվել է համապատասխան լրացում	**Ընդունվել է:**

7.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի վերնագիր**	Կատարվող լրացումների արդյունքում առաջարկում ենք նախագծի վերանգրում ավելացնել «ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» ԲԱՌԵՐԸ:	**Ընդունվել է**	**Ընդունվել է:**
8.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծերի ընդունման հիմնավորումներ**	Առաջարկում ենք կատարվող լրացումների հիման վրա լրամշակել նաև Նախագծերի ընդունման հիմնավորումները:	**Ընդունվել է**	**Ընդունվել է:**